ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 հուլիսի 2014 թվականի N Մ- 653 -Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱԿԱՑԱՎԱՅԻՆ ԵՎ ՊԱԼԻԱՏԻՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2014 թվականի հուլիսի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Էդգար Կարապետյանի միջոցներով ձեռքբերված ու «Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի («TOYOTA GRAND HIACE» մակնիշի 2001 թվականի արտադրության միկրոավտոբուս, թափքի համարը՝ VCH16-0020474, շարժիչի համարը՝ 5VZ-1357674, 2,190 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,020 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հակացավային և Պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ      Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 հուլիսի 2014 թվականի N Մ - 654 – Ա**

(որոշումն ընդունվել է 2014 թվականի հունիսի 27-ին)

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք. ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9249-14 և հունիսի 20-ի N 06/3-4/7542-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «6,291,984,000» բառերը փոխարինել «15,603,600,000» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղի
տնօրեն՝ Հ. Ներսեսյանի կողմից
08 Հուլիսի 2014 թվ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2009 մինչև 2016թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ԱՊԱԳԱ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է<br>Իրականացնել կրթական, մշակութային, սոցիալական, առողջապահական, համայնքային զարգացման ,բարենպաստ պայմանների ստեղծման / վերանորոգում, բարեկարգում, շինարարություն/ և բարեգործական տարբեր բնույթի ծրագրեր և միջոցառումներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլորտման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային, մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչուրի Րոուդ, Հույս Հայաստանի համար Ֆրանսիա, անհատ բարերարներ և կազմակերպություններ |
| 4 | Ծրագիրը կատարող | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ<br>ՀՎՀՀ 00032803, հասցե: Նիկոլ Դուման 22 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը , բնագավառը | ՀՀ, Երևան, ՀՀ տարբեր մարզեր<br>Ծրագիրը առնչվում է սոցիալական, առողջապահական, մշակույթի, սպորտի, համայնքային զարգացման և կրթական բնագավառներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 15 603 600 000 տասնհինգ միլիարդ վեց հարյուր երեք միլիոն վեց հարյուր հազար ՀՀ դրամ յոթ տարվա համար:<br>2009 - 2013 թվականների համար բյուջեն կազմում է 11 145428571 /տասնմեկ միլիարդ հարյուր քառասունհինգ միլիոն չորս հարյուր քսանութ հազար հինգ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ և դրա շրջանակներում ծրագրերը իրականացվել են և արդեն իսկ ստացված հարկային և մաքսային արտոնություններից բացի այլ արտոնություններ չեն ակնկալվում: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝<br>• անապահով ընտանիքները, բազմազավակ երեխաները, զոհված կամ վիրավոր ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամները, բազմազավակ ընտանիքները, միայնակ և կարիքավոր ծերերը,անապահով ընտանիքները, փախստականներ:<br>• Ոչ առևտրային կազմակերպություններ<br>• Դպրոցները, մանկապարտեզները, մանկատները, ծերանոցները, հիվանդանոցները, համայնքներ և այլն:<br>Ընդհանուր թվով մոտ 15.000 շահառու: |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբ - 01.01.2009 – 01.01.2016 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ստորև նշված ծրագրերը իրականացվելու են են 2009 - 2016 թվականներին<br>1. <u>Օգնության ծրագրեր երեխաների, կարիքավորի և ծերերի համար՝</u><br>Եռամսյակային դրամական օգնություն մոտ 2800 երեխաների: Ծրագրում ընդգրկված երեխաները եռամսյակը մեկ անգամ 50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի օգնություն են ստանում:<br>Երևան – 538 երեխա, Արարատ – 17 , Արևշատ – 21,Արմավիր – 11, Արտաշատ – 113, Սևան – 6, Վարդենիս– 13, Սպիտակ – 78, Նալբանդ - 27, Ստեփանավան – 85, Վանաձոր- 334, Գյումրի – 383, Մարալիկ – 46, Ամասիա - 19, Արթիկ – 45, Արագածավան – 31,Թալին – 65, Աշտարակ – 63,Գավառ– 20, Ապարան – 40, Արտենի - 14, Իջևան – 101,Դիլիջան – 31, Բերդ - 33, Նոյեմբերյան – 35, Սիսիան – 29,Կապան – 48, Եղեգնաձոր – 24, Գորիս – 48, Ալավերդի – 54, Օձուն - 11 Տաշիր – 48, Ստեփանակերտ –161, Շուշի – 66, Ազկերան – 48, Մարտունի – 36,Մարտակերտ – 20, Հադրութ – 20, Ախալքալակ - 18:<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 184800000 հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր հազար դրամ:**<br><br>Տարվա կտրվածքով ծրագրում ընդգրկված անապահով անձիք -ստանում են կենցաղային, առողջապահական, կրթական ծախսերը հոգալու համար նյութական օժանդակություն:<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 148000000 հարյուր քառասունութ միլիոն դրամ:**<br><br>Եռամսյակային դրամական օժանդակություն 250 միայնակ կարիքավոր ծերերի - Երևան, Գյումրի, Վանաձոր, Թբիլիսի, Ալավերդի, Սպիտակ, Գորիս, Հրազդան, Թալին, Արագածոտն, Ստեփանավան, ԼՂՀ: Ծրագրում ընդգրկված ծերերը եռամսյակը մեկ անգամ 30ԱՄՆ դոլարին համարժեք դրամի օգնություն են ստանում:<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 13000000 տասներեք միլիոն :**<br><br>Ամենամսյա սննդային և կենցաղային պարագաների տրամադրում 135 կարիքավոր ծերերի - Գորիս. Իջևան, Տաշիր և Բերդ : Ծրագրում ընդգրկված ծերերը եռամսյակը մեկ անգամ 33 եվրոյին համարժեք դրամի սննդային և կենցաղային անհրաժեշտ պարագաների օգնություն են ստանում:<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 19125000 տասնինը միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ:**<br><br>1997 թ. դեկտեմբերից Ստեփանավանում գործում է բարեգործական ճաշարան՝ մոտ 55 կարիքավոր մեծահասակների համար: Ճաշարանը գործում է տարեկան 6 ամիս ÷<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 6750000 վեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դրամ:**<br><br>2. <u>Առողջապահական ծրագրեր</u><br>• Ծրագրերում ընդգրկված մարդիկ տարվա ընթացքում անցնում են բժշկական ստուգումներ, օգտվում են ատամնաբուժական ծառայություններից:<br>Վանաձորում գործում է մանկական բարեգործական անվճար բժշկական կենտրոն, արտեղ տարվա կտրվածքով անվճար սպասարկվում են շուրջ 1500 մարդ:<br>Նմանատիպ կենտրոն՝ Ֆրանսիայի «Հայ բժիշկների միության» (U.M.A.F.) համագործակցությամբ, ստեղծվեց նաեւ Սպիտակում, որտեղ անվճար սպասարկվում են շուրջ 3800 մարդ:<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 21500000 քսանմեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:**<br><br>3. <u>Մանկական սնունդի ծրագիր</u><br>1992-ից ԱՀԱԸ-ն մինչեւ մեկ տարեկան հարյուրավոր երեխաների անվճար տրամադրում է ԻԶՈՄԻԼ և Սիմիլակ |
| | | կերակրատեսակները :<br>**Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 88000000 ( ութսունութ միլիոն) դրամ:**<br><br>4. <u>Կրթական ծրագրեր</u><br>• երեխաները անհատույց հաճախում են ՀԱԸ-ի Բարեսիրական կենտրոնները, որտեղ անվճար գործում են տարբեր խմբակներ՝ երգչախումբ, թատերախումբ, խեցեգործության, նկարչության, անգլերեն, հայերեն լեզուների, մաթեմատիկայի, համակարգչային դասընթացներ, Ձեռքի աշխատանքի, սպորտային խմբակներ:<br>• Թալինում և Վանաձորում գործում են մանկապարտեզներ<br>Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 10000000 տաս միլիոն ՀՀ դրամ :<br>Տարին մեկ անգամ իրակացվում է ԲՈՒՀ սովորող երեխաների ուսման վարձերի դրամական օգնության ծրագիրը: Ծրագրում ընդգրկվում են անապահով և առաջադեմ ուսանողներ և ԱՀԱԸ-ն վճարում է ծրագրով հաստաված ուսանողների վարձի որոշ մասը:<br>Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 9000000 ինը միլիոն ՀՀ դրամ :<br><u>Գործում է նաև " Մասնագիտական ուսուցման" ծրագիրը:</u><br>Դրամական աջակցություն 18 – 30 տարեկան գործազուրկ և կարիքավոր երիտասարդներին ձեռք բերելու Հայաստանում պահանջարկ ունեցող մասնագիտություն, որը նրանց կապահովի աշխատանքով:<br>Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 15000000 տասնհինգ միլիոն ՀՀ դրամ:<br>• <u>Մանկապարտեզներ</u><br>Թալինում և Վանաձորում գործում են ԱՀԱԸ-ին պատկանող 2 մանկապարտեզներ , որտեղ անվճար հաճախում են մոտ 100 երեխա:<br>Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 13125000 տասերեք միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ:<br>• <u>Նոր տարվա , Սուրբ Ծնունդի, Զատիկի և այլ միջոցառումների կազմակերպում</u><br>Ամեն տարի Երևանում, ՀՀ տարբեր շրջաններում, գյուղերում, ԼՂՀ-ում տեղական իշխանությունների համաձայնությամբ եւ համագործակցությամբ կարիքավոր ընտանիքների ավելի քան տասնյակ հազարավոր երեխաների համար կազմակերպվում են միջոցառումներ:<br>Երեխաներին բաժանվում են նվերներ:<br>Քաղցրավենիքների ձեռքբերում – մոտ 7000000 յոթ միլիոն ՀՀ -դրամ առանց ԱԱՀ-ի:<br>Հյուրասիրությունների կազմակերպում - մոտ 3000000երեք միլիոն ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br>Տարբեր նյութերի ձեռքբերում միջոցառման կազմակերպման համար (Տոնածառեր, խաղալիքներ, դեկորատիվ ապրանքներ և այլն) – մոտ 10000000 տաս միլիոն ՀՀ դրամ:<br>թատրոնների կամ այլ սրահների վարձակալություններ – մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:<br>Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 22500000 քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ:<br>• <u>Ճամբարների կազմակերպում</u><br>Ամեն տարի երեխաները ընդգրկվում են ԱՀԱԸ-ի կողմից կազմակերպված բակային և Հանքավանի " Շողիկ" և Շուշիի " Պետրոսյանների անվան ճամբարում":<br>Երեխաները օրական 4 անգամ բարձրորակ սնունդ են ստանում, ներգրավվում են տարբեր միջոցառումներում, խաղերում, ձեռային աշխատանքների խմբակներում:<br><u>Տարեկան մոտ 8000 երեխաներ հանգստանում են ԱՀԱԸ-ի կազմակերպած Բակային և Մեծ ճամբարներում</u> ; |

- <u>Մեծ ճամբար</u>

  Սնունդ -   մոտ 23.000.000 (քսաներեք միլիոն ) դրամ:

  տրանսպորտ – մոտ 8000000  ութ միլիոն ՀՀ դրամ :

  Բակային ճամբարներ

  Երեխաների համար հյուրասիրությունների կազմակերպման համար սնունդի ձեռքբերում –  մոտ 5000000 հինգ միլիոն  դրամ:

  **Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ  36000000 երեսունվեց միլիոն   ՀՀ դրամ:**

- <u>Ցերեկային խնամքի  կենտրոններ</u>

  Կենտրոնի նպատակն է բարձրացնել 6-14 տարեկան կարիքավոր երեխաների կրթական մակարդակը, բացահայտել և զարգացնել նրանց ընդունակությունները, վեր հանել երեխաների խնդիրները և կենտրոնացնել աշխատանքային թիմի  ուժերը դրանք լուծելու համար:

Կենտրոն հաճախող  երեխաներին առաջարկվում է.

- Սոցիալական աշխատանք երեխայի և նրա ընտանիքի հետ,
- Հոգեբանի ծառայություն,
- Կրթական ծառայություններ (հայոց լեզվի, մաթեմատիկայի, համակարգչային դասընթացներ),
- Արհեստի, արվեստի խմբակներ (պար, նկարչություն, ձեռագործ), խաղեր,
- Տաք սնունդ,
- Խիստ անհրաժեշտության և ռեսուրսների առկայության դեպքում նյութական աջակցություն:

  Ծրագրի բյուջեն կազմում է  **մոտ** 80000000 / ութսուն միլիոն/ ՀՀ դրամ  մեկ տարվա կտրվածքով:

5. Հիմնադրամների,  բարեգործական,  ոչ առևտրային կազմակերպությունների նվիրատվություն, նվիրաբերություն, ֆինանսավորում,  գյուղատնտեսական, համայնքային զարգացման  և այլ  ծրագրերի իրականացման նպատակով –   մոտ 420000000 չորս հարյուր  քսան միլիոն ՀՀ դրամի չափով:

   Վերոնշյալ ծրագրերի գումարները հաշվարկված են  մեկ տարվա  կտրվածքով:

6. Հագուստի, կոշիկի,  սննդի, գրենական պիտույքների, հիգիենայի պարագաների, բուժսարքավորումների, դեղորայքի, կենցաղային պարագաների, գույքի, գրքերի, օրացույցների  և այլ ապրանքների ձեռքբերում , ներմուծում և անհատույց տրամադրում  անապահովներին -  բյուջեն կազմում է մոտ 600000000 (վեց  հարյուր միլիոն) դրամի չափով 1 տարվա կտրվածքով :

7. Ամերիկայի Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին պատկանող բարեսիրական կենտրոնների, մանկապարտեզների ,  ճամբարների ,  այլ բարեսիարական կազմակերպությունների համար  հիմնանորոգման, կառուցման աշխատանքների իրականացում –  մոտ 250000000 երկու հարյուր հիսուն միլիոն ՀՀ դրամի առանց ԱԱՀ-ի մեկ տարվա կտրվածքով

8. Միջոցառումների կազմակերպման համար սրահների, դահլիճների վարձակալում, մաքսային պահեստների վարձավճարներ մեկ տարվա կտրվածքով –   մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ

9. Կազմակերպական ծախսերից են՝

   1. Ավտոմեքենաների ներմուծում –  մոտ 40500000  քառասուն միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:
   2. կահույքի, գրասենյակային  պարագաների, սարքավորումների,  ոչ նյութական ակտիվների  ձեռքբերում, հիմնական միջոցների  նորոգման, սպասարման ծառայություններ , սպասարկման ծառայություններ   և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում ,  աշխատակազմի մասնագիտական  որակավորմանն ուղղված միջոցառումների կազմակերպում ,   հաշվապահական հաշվառման սպասարկման  ծառայություններ /աուդիտ, գնահատում, խորհրդատվություն/ և այլ անհրաժեշտ ծախսեր տարեկան մոտ 100000000 հարյուր միլիոն ՀՀ դրամի չափով:
   3. Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ –  մոտ 35000000/երեսունհինգ  միլիոն/ ՀՀ դրամի չափով  1 տարվա կտրվածքով:
   4. Հայռուսգազարդ» ՓԲԸ –  մոտ 27000000 /քսանյոթ  միլիոն/ դրամի չափով  և բնական գազի սպասարկում «էյ Ի Ջի» սերվիսի  կողմից – մոտ 1000000 /մեկ միլիոն/ դրամի չափով  1 տարվա կտրվածքով:
   5. Ջուր -   մոտ 2000000 երկու միլիոն  դրամ մեկ տարվա կտրվածքով :   (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
   6. Հեռախոսավարծ -  մոտ 9000000 ինը միլիոն  դրամ մեկ տարվա կտրվածքով:   (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
   7. Կազմակերպչական, ներկայացուցչական  և չնախատեսված այլ ծախսեր 1 տարվա կտրվածքով  – 110000000/ հարյուր տաս միլիոն/ ՀՀ դրամ
      - Գործուղում,  սեմինարների կազմակերպում և չնախատեսված ծախսեր – մոտ 25000000/քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ
      - Տպագրություններ, գրքեր –  մոտ 21000000/ քսանմեկ  միլիոն/ ՀՀ դրամ
      - Իրավաբանական ծառայություններ –  մոտ 6000000/ վեց միլիոն / ՀՀ դրամ
      - Դիզվառելանյութի, գազի, բենզինի ձեռքբերում-  մոտ 31000000 / երեսունմեկ միլիոն/ ՀՀ դրամ:
      - Բանկային ծառայություններ, ապահովագրական ծախսեր – մոտ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ
      - Աղբահանության ծառայություն – մոտ 1500000/ մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ
      - Ինտերնետային ծառայություն –  մոտ 1500000/մեկ միլին հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ
      - Փոստային ծառայություններ –  մոտ 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ  և այլ ծախսեր
      - Գույքահարկ  և հողի հարկ – մոտ 5000000/ հինգ միլիոն/ ՀՀ դրամ
      - Գրասենյակների, կենտրոնների  վարձակալություն –  մոտ 16000000/տասնվեց միլիոն/ ՀՀ դրամ:

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | • Հագուստի, կոշիկի,  սննդի, գրենական պիտույքների, հիգիենայի պարագաների, բուժսարքավորումների, դեղորայքի, կենցաղային պարագաների, գույքի, գրքերի, օրացույցների  և այլ ապրանքների ձեռքբերում , ներմուծում և անհատույց տրամադրում  անապահովներին -  բյուջեն կազմում է մոտ 600000000 (վեց  հարյուր միլիոն) դրամի չափով 1 տարվա կտրվածքով :<br>• Ամերիկայի Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին պատկանող բարեսիրական կենտրոնների, մանկապարտեզների ,  ճամբարների ,  այլ բարեսիարական կազմակերպությունների համար  հիմնանորոգման, կառուցման աշխատանքների իրականացում – մոտ 250000000 երկու հարյուր հիսուն միլիոն ՀՀ դրամի առանց ԱԱՀ-ի մեկ տարվա կտրվածքով<br>• Միջոցառումների կազմակերպման համար սրահների, դահլիճների վարձակալում, մաքսային պահեստների |

վարձավճարներ մեկ տարվա կտրվածքով – մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ

- Կազմակերպական ծախսեր՝
  1. Ավտոմեքենաների ներմուծում – մոտ 40500000 (քառասուն միլիոն հինգ հարյուր հազար) դրամի չափով:
  2. կահույքի, գրասենյակային պարագաների, սարքավորումների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, հիմնական միջոցների նորոգման, սպասարման ծառայություններ , սպասարկման ծառայություններ և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում , աշխատակազմի մասնագիտական որակավորմանն ուղղված միջոցառումների կազմակերպում , հաշվապահական հաշվառման սպասարկման ծառայություններ /աուդիտ, գնահատում, խորհրդատվություն/ և այլ անհրաժեշտ ծախսեր տարեկան մոտ 100000000 հարյուր միլիոն ՀՀ դրամի չափով:
  3. Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ – մոտ 35000000 /երեսունհինգ միլիոն/ ՀՀ դրամի չափով 1 տարվա կտրվածքով:
  4. Յայռուսգազարդ» ՓԲԸ – մոտ 27000000 /քսանյոթ միլիոն/ դրամի չափով և բնական գազի սպասարկում «էյ Ի Ջի» սերվիսի կողմից – մոտ 1000000 /մեկ միլիոն/ դրամի չափով 1 տարվա կտրվածքով:
  5. Ջուր - մոտ 2000000 երկու միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով : (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
  6. Յեռախոսավարձ - մոտ 9000000 ինը միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
  7. Կազմակերպչական, ներկայացուցչական և չնախատեսված այլ ծախսեր 1 տարվա կտրվածքով – մոտ 110000000/ հարյուր տաս միլիոն/ ՀՀ դրամ
     - Գործուղում, սեմինարների կազմակերպում և չնախատեսված ծախսեր – մոտ 25000000/քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ
     - Տպագրություններ, գրքեր – մոտ 21000000/ քսանմեկ միլիոն/ ՀՀ դրամ
     - Իրավաբանական ծառայություններ – մոտ 6000000/ վեց միլիոն / ՀՀ դրամ
     - Դիզվառելանյութի, գազի, բենզինի ձեռքբերում- մոտ 31000000 / երեսունմեկ միլիոն/ ՀՀ դրամ:
     - Բանկային ծառայություններ, ապահովագրական ծախսեր – մոտ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ
     - Աղբահանության ծառայություն – մոտ 1500000/ մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ
     - Ինտերնետային ծառայություն – մոտ 1500000/մեկ միլին հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ
     - Փոստային ծառայություններ – մոտ 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ և այլ ծախսեր
     - Գույքահարկ և հողի հարկ – մոտ 5000000/ հինգ միլիոն/ ՀՀ դրամ
     - Գրասենյակների, կենտրոնների վարձակալություն – մոտ 16000000/տասնվեց միլիոն/ ՀՀ դրամ:

- <u>Ցերեկային խնամքի կենտրոններ</u>
  Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 80000000 / ութսուն միլիոն/ ՀՀ դրամ մեկ տարվա կտրվածքով:
- <u>Մեծ ճամբար</u>
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 36000000 երեսունվեց միլիոն ՀՀ դրամ
- <u>Նոր տարվա , Սուրբ Ծննդի, Զատիկի և այլ միջոցառումների կազմակերպում</u>
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 22500000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
  Ճամբարների կազմակերպում,
- <u>Մանկապարտեզներ</u>
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 13125000 (տասերեք միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ):
- Մասնագիտական ուսուցման ծրագիրը:
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 15000000 տասնհինգ միլիոն ՀՀ դրամ:
- Կրթական ծրագրեր
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 10000000 (տաս միլիոն ՀՀ դրամ:
- Մանկական սնունդի ծրագիր
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 88000000 ( ութսունութ միլիոն) դրամ:
- Առողջապահական ծրագրեր
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 21500000 քսանմեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:
- Բարեգործական ճաշարան
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 6750000 վեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դրամ:
- Սննդային և կենցաղային պարագաների տրամադրում
  Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 19125000 տասնինը միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ:

Ընդամենը
- Ներմուծումներ մոտ 540.500.000 (հինգ հարյուր քառասուն միլիոն հինգ հարյուր հազար)ՀՀ դրամ
- Ձեռք բերվող ապրանքներ մոտ 239.000.000 (երկու հարյուր երեսունինն միլիոն) ՀՀ դրամ
- Ծառայությունների ձեռք բերում մոտ 709.500.000 (յոթ հարյուր ինն միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ

<table>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Կազմակերպական ծախսերից են՝<br>8. Ավտոմեքենաների ներմուծում – մոտ 40500000 քառասուն միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:<br>9. կահույքի, գրասենյակային պարագաների, սարքավորումների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, հիմնական միջոցների նորոգման, սպասարման ծառայություններ , սպասարկման ծառայություններ և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում , աշխատակազմի մասնագիտական որակավորմանն ուղղված միջոցառումների կազմակերպում , հաշվապահական հաշվառման սպասարկման ծառայություններ /աուդիտ, գնահատում, խորհրդատվություն/ և այլ անհրաժեշտ ծախսեր տարեկան մոտ 100000000 հարյուր միլիոն ՀՀ դրամի չափով:<br>10. Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ – մոտ 35000000/երեսունհինգ միլիոն/ ՀՀ դրամի չափով 1 տարվա կտրվածքով:<br>11. Յայռուսգազարդ» ՓԲԸ – մոտ 27000000 /քսանյոթ միլիոն/ դրամի չափով և բնական գազի սպասարկում «էյ Ի Ջի» սերվիսի կողմից – մոտ 1000000 /մեկ միլիոն/ դրամի չափով 1 տարվա կտրվածքով:<br>12. Ջուր - մոտ 2000000 երկու միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով : (ակնկալում ենք հարկային արտոնություններ)<br>13. Յեռախոսավարձ - մոտ 9000000 ինը միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)<br>14. Կազմակերպչական, ներկայացուցչական և չնախատեսված այլ ծախսեր – մոտ 110000000/ հարյուր տաս միլիոն/ ՀՀ դրամ<br>• Գործուղում, սեմինարների կազմակերպում և չնախատեսված ծախսեր – մոտ 25000000/քսանհինգ միլիոն/</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ դրամ<br>• Տպագրություններ, գրքեր – մոտ 21000000/ քսանմեկ միլիոն/ ՀՀ դրամ<br>• Իրավաբանական ծառայություններ – մոտ 6000000/ վեց միլիոն / ՀՀ դրամ<br>• Դիզվառելանյութի, գազի, բենզինի ծեռքբերում- մոտ 31000000 / երեսունմեկ միլիոն/ ՀՀ դրամ:<br>• Բանկային ծառայություններ, ապահովագրական ծախսեր – մոտ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ<br>• Աղբահանության ծառայություն – մոտ 1500000/ մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ<br>• Ինտերնետային ծառայություն – մոտ 1500000/մեկ միլին հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ<br>• Փոստային ծառայություններ – մոտ 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ և այլ ծախսեր<br>• Գույքահարկ և հողի հարկ – մոտ 5000000/ հինգ միլիոն/ ՀՀ դրամ<br>• Գրասենյակների, կենտրոնների վարձակալություն – մոտ 16000000/տասնվեց միլիոն/ ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական առավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցությունը նախատեսվում է<br>• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն .<br>• Տեղական ինքնակառավարման մարմինների հետ<br>• Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Մայր գրասենյակի կողմից, ԱՀԱԸ-ի դոնորներին և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով են ներկայացվում համապատասխան հաշվետվություններ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 655 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8162-14 և N 06/3-3/8152-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված N 99/23/08/2011 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունիսի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 656 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8488-14 և հուլիսի 1-ի N 06/3-28297-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N ԱՄ/22.1/6671-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռը՝ ակնաբուժական սարքի մաս (գազի ռետինե խողովակ 1 տեղ, 3.7 կգ, 385 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 657 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N1

(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8490-14 և հուլիսի 1-ի N 06/3-2/8310-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N ԱՄ/22.1/6676-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռը (ակնաբուժական սարք՝ էնդոսկոպի համակարգ Endo optics E4 OME 4000, մեկ տեղ, 22.68 կգ, 2,502.23 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 658 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8546-14 և հուլիսի 8-ի N 06/3-2/8850-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված փայտե շինարարական վահանակները և կոնստրուկցիոն դետալները (66 տեղ, 19,777 կգ ընդհանուր քաշով, 18,079,3 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,739 եվրո, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 659 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ N1

(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9123-14 և հուլիսի 11-ի N 06/3-2/9138-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N ԱՄ/22.1/7080-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված դեղերը (71 տեղ, 786.56 կգ ընդհանուր քաշով, 35,701.98 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 660 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8155-14 և հունիսի 26-ի N 06/3-3/7932-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N ԱՍ/22.1/6457-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունենի զգալի նշանակություն՝

1) «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01202252) 2014 թվականի մարտի 27-ին կնքված պայմանագրում և նույն պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի մայիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի վարձակալում՝ 8,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01556354) 2014 թվականի մայիսի 23-ին կնքված N 1316 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման ծառայությունների մատուցում՝ 150,583 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 04719489) 2014 թվականի մայիսի 26-ին կնքված N ՏԱԳ-ԾԱՁԲ-14/7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական թափոնների դուրսբերում և այրում՝ 250,002 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սի Փի ԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N ՏԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի գնում՝ 11,760,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 661 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N1

**(«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8163-14 և հունիսի 26-ի N 06/3-3/7936-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N ԱՄ/22.1/6456-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02228306) 2014 թվականի հունիսի 9-ին կնքված NN ՏԱԳ-ԾԱՁԲ-14/11-1 և ՏԱԳ-ԾԱՁԲ-14/11 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են N 1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված համակարգիչների սպասարկման ծառայությունների մատուցում 400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և տպիչների սպասարկման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 662 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» և «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N ԱՄ/22.1/6673-14 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8265-14 և հուլիսի 2-ի N 06/3-3/8316-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա և 2014 թվականի հունիսի 6-ի N Մ-501-Ա որոշումների խմբագրությամբ), և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնատէս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02258158) 2014 թվականի հունիսի 13-ին կնքված N ԳՀ ԾՀԱՊՁԲ-11/11-2014/7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքների գնում 1,850,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (975,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 875,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի, N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 663 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N1**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում», և «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)

---

*Հայասպանի Հանրապեպության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասպանի Հանրապեպության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N ԱԱ/22.1/6455-14 գրությունը, Հայասպանի Հանրապեպության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7876/-14 և հուլիսի 1-ի N 06/3-3/8154-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա և 2014 թվականի հունիսի 6-ի N Մ-501-Ա որոշումների խմբագրությամբ), և 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2014 թվականի հունիսի 12-ին կնքված N ԳՀ-ԾՀԱՊՁԲ-11/1-2014/8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված բենզինի գնում՝ 6,303,000



դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (3,608,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 2,695,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի, N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-664-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8485-14 և հուլիսի 8-ի N 06/3-3/8770-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 7-ի N 02/4683-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 1/05/638-14, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N 05/5.1/3280-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի N 101/104.3.2/3156-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 1,044,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի հունիսի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի կառուցման, տարածքի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 833,699,335 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի



պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«27» հունիսի 2014 թ.

«Վանաձորի Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի արածաշրջանում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի Սեբաստիա փողոցի թիվ 2/4 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, ժնև) և Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Վանաձոր քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,044,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)՝ ի դեմս Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի Սեբաստիա փողոցի թիվ 2/4 հասցեում կառուցվող Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 706,750,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>2. Խաղադաշտերի կառուցում՝ 161,500,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>3. Գլխավոր մասնաշենքի կահավորում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2015 թվականի մայիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>4. Շինարարական նյութերի, ներքին հարդարման պարագաների, արտաքին լուսավորության սարքավորումների, խաղադաշտերի խնամքի սարքավորումների, խոտի սերմի և պարարտանյութերի ներմուծում՝ 160,750,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - հողային աշխատանքների՝ 109,500,000 դրամ<br>- գլխավոր մասնաշենքի շինարարական և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 297,250,000 դրամ,<br>- գլխավոր մասնաշենքի էլեկտրատեխնիկական աշխատանքներ և անվտանգության համակարգերի կառուցում՝ 26,500,000 դրամ,<br>- գլխավոր մասնաշենքի ջեռուցում և օդափոխության համակարգերի կառուցում՝ 25,000,000 դրամ,<br>- Տարածքի էլեկտրասնուցման և արտաքին լուսավորության աշխատանքներ՝ 5,000,000 դրամ<br>- կաթսայատան կառուցում՝ 12,000,000 դրամ,<br>- խորքային հորի, պոմպակայանի, ջրամբարի և ոռոգման համակարգերի կառուցում՝ 89,000,000 դրամ,<br>- ցանկապատում և պարսպապատում՝ 92,500,000 դրամ,<br>- շինության հարող տարածքի բարեկարգում և ասֆալտապատում՝ 50,000,000 դրամ,<br>Նախատեսվում է կառուցել նաև չորս ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 161,500,000 դրամ:<br>Գլխավոր մասնաշենքի կահավորում 15,000,000 դրամ:<br>Շինանյութի և ներքին հարդարման պարագաների՝ 35,000,000 դրամ, արտաքին լուսավորության սարքավորումների՝ 57,500,000 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների՝ 28,250,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի՝ 40,000,000 դրամ ներմուծում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Վանաձորի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-665-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/7976-14 և հունիսի 26-ի N 06/3-7/7917-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N ԱՄ/22.1/6454-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, «Կաթոլիկ բժշկական առաքելության խորհուրդ (CMMB)» ոչ առևտրային կազմակերպության կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղամիջոցի՝ «Զիոպտան» աչքի կաթիլների (2 տեղ, 32 կգ ընդհանուր քաշով, 20,758 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 487.24 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-666-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9092-14 և հուլիսի 14-ի N 06/3-2/9302-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N ԱՄ/22.1/ 7079-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի հայկական բժշկական միության (UMAF) կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի բնակչության տեսողության զննման, ակնոցների պատրաստման և տրամադրման՝ «Ակնոցներ Հայաստանի համար» ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների (5 տեղ, 108 կգ ընդհանուր քաշով, 10,400 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը) և օպտիկական ապակիների, շրջանակների, օպտիկական ակնոցների ու տուփերի (5 տեղ, 90 կգ ընդհանուր քաշով, 2,900 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո սարքավորումները վերաարտահանվելու են Ֆրանսիայի հայկական բժշկական միության (UMAF) բժիշկ-մասնագետների կողմից:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին և Վարդենիսի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-667-Ա**
**քաղ. Երևան**

## «ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N 07/80-2/8338-14 և հուլիսի 7-ի N 06/3-2/8698-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ** է.*

1. Բարեգործական որակել Կալիֆորնիայի համալսարանի Իրվինի «CaSTL» հետազոտական կենտրոնի կողմից որպես օժանդակություն «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ուղարկված լաբորատոր պարագաների և հարակից մասերի (մեկ տեղ, 0.72 կգ ընդհանուր քաշով, 893 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 120.64 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-668-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8489-14 և հուլիսի -ի N 06/3-2/8709-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված լողավազանի խնամքի և պահպանման միջոցները (77 տեղ, 3,100 կգ ընդհանուր քաշով, 11,544 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 750 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա, հունիսի 29-ի N Մ-505-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի՝ N Մ-1226-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-669-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8464-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8907-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված լուսային ցուցավահանակը (6 տեղ, 558 կգ ընդհանուր քաշով, 18,772 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա, հունիսի 29-ի N Մ-505-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1226-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-670-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9124-14 և հուլիսի 14-ի N 06/3-2/9303-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կահույքը (մեկ տեղ, 330 կգ ընդհանուր քաշով, 4,977 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա, հունիսի 29-ի N Մ-505-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1226-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-671-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9087-14 և մայիսի 27-ի N ՎՄ/3-4/6357-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված կերամիկական և խճանկարային սալիկները (22 տեղ, 18,990 կգ ընդհանուր քաշով, 4,500 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-672-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/7971-14 և հունիսի 30-ի N 06/3-4/8138-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված խոհանոցային կահավորանքը, սարքավորումները և պարագաները (15 տեղ, 594 կգ ընդհանուր քաշով, 15,671 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 5,792 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «ՀԲԸՄ երիտասարդական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-673-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9088-14 և հուլիսի 10-ի N 06/3-3/9045-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալֆա-Դելտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00259823) 2014 թվականի հուլիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահնորդական ծառայության իրականացում՝ 1,440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-674-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N 07/80-2/9177-14 և հուլիսի 14-ի N 06/3-3/9301-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միգո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03539286) հետ 2014 թվականի հուլիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 150 խոր. մետր պեռլիտե սալիկների ձեռքբերում՝ 7,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-675-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N 07/80-2/9178-14 և հուլիսի 10-ի N 06/3-3/9043-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2014 թվականի մարտի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատուկ լվացող նյութի ձեռքբերում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՏԱՌ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02218913) 2014 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 98,940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-676-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9234-14 և հուլիսի 15-ի N 06/3-2/9381-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 02/4922-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 399,528,726 դրամ ընդհանուր արժողությամբ «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որաշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) երեսպատման սալիկներ, դրանց համար նախատեսված սոսինձ և սանտեխնիկա՝ 35 տեղ, 29,820 կգ ընդհանուր քաշով, 31,276.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,600 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) խոտածածկի ոռոգման համակարգի հեղուկացիր գնդիկներ՝ մեկ տեղ, 58 կգ ընդհանուր քաշով, 6,728.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն



անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ար և Ար դիզայն քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2014 թվականի հունիսի 9-ին կնքված՝ N 090614-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման և օդափոխության համակարգի սարքավորումների մատակարարման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 8,009,917 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էդիլյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01254363) 2014 թվականի հունիսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական պտտադռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 17,405,684 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2014 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N ՆՊ001-ՍԼ14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մամուլի կենտրոնի նախագծման աշխատանքների իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերակառուցման, վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 182,157,809 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ ծրագրի ավարտից հետո, մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«16» հուլիսի 2014թ.

«Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 399,528,726 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացի» իրավաբանական անձանց միությունը՝ ի դեմս Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի հուլիսի 7-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 183,657,809 դրամ,<br>2. Օդափոխություն և ջեռուցում՝ 8,009,917 դրամ,<br>3. Մետաղական պտտադռների պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ,<br>4. Մարզադաշտի խնամքի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի ու տեսահսկման համակարգերի համար անհրաժեշտ սկաներների, սերվերների, տպիչ սարքերի, սարքավորումների և տեսախցիկների ներմուծում՝ 190,455,000 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հանրապետական մարզադաշտի մամուլի կենտրոնի նախագծի կազմում՝ 1,500,000 դրամ,<br>- Հանրապետական մարզադաշտի մետաղյա կարկասների, միջնորմային պատերի, կախովի առաստաղների, վիտրաժների և սանհանգույցների սարքավորումների ապամոնտաժման աշխատանքներ, ջրամատակարարման և ներքին կոյուղու ցանցի կառուցում, միջնորմների և պատերի, մետաղական կոնստրուկցիաներով ծածկի կառուցում, էլեկտրամոնտաժ, ներքին հարդարում, երեսպատում, կահավորում, մետաղական անցուղիների և մետաղական ճաղավանդակներով արտաքին պարիսպի կառուցում՝ 182,157,809 դրամ,<br>- Օդափոխություն և ջեռուցում՝ 8,009,917 դրամ,<br>- Մետաղական պտտադռների պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ:<br>Մարզադաշտի խնամքի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի համակարգի համար անհրաժեշտ հաշվիչ սկաներների, ծրագրային սարքավորումների, սերվերների, տպիչ սարքերի և տեսահսկման համակարգի համար անհրաժեշտ տեսախցիկների և սարքավորումների ներմուծում՝ 190,455,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավ«տության նկատմամբ վ«րահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-677-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9352-14 և հուլիսի 18-ի N 06/3-2/9714-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 1/06/706-13 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (6 տեղ, 76 կգ ընդհանուր քաշով, 2,856.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-678-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9350-14 և հուլիսի 18-ի N 06/3-2/9706-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 1/06/708-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (6 տեղ, 149 կգ ընդհանուր քաշով, 6,244 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,420 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-679-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/8825-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8988-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված պղնձյա ժապավենը (8 տեղ, 16,468 կգ ընդհանուր քաշով, 5,785,935 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 100,000 ռուսական ռուբլի, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-680-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/8067-14 և հունիսի 25-ի N 06/3-4/7828-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ջրի պոմպերը (մեկ տեղ, 280 կգ ընդհանուր քաշով, 6,457 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 600 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՁՓ» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության անօրենի
պաշտոնակատար Օ. [illegible] կողմից
«14» հուլիսի 2014թ.

«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3,632,200,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br>- ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստան» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անդրանիկ» սկաուտական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը,<br>- «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>- ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>- ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2014 թվականի դեկտեմբեր ամսին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br>ա) Շենքի ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ:<br>բ) տարածքում գտնվող ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ:<br>գ) Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ<br>դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ:<br>ե) Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերականգնման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորանք և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2014 թվականի դեկտեմբերին - 3,233,469,594 դրամ: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում: | 52,200,000 դրամ |
| | | Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում: | 65,524,826 դրամ |
| | | Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ: | 28,605,920 դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար: | 252,399,660 դրամ |
| | | Շենքի ընդհանուր շինարարության աշխատանքներ՝ 1,036,129,594 դրամ<br>Ջեռուցման, օդափոխության, օդորակման համակարգերի, ամրանների և կցամասերի, հակավիբրացիոն ռետինների, վերելակների, ապակյա պատուհանների և դռների, կցամասերի և հատակի սալիկների, մետաղական ճաղավանդակների, կանգնակների և արհեստական գորգերի ներմուծում-697,340,000 դրամ: | 1,733,469,594 դրամ |
| | | Շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնատեսազննման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը:<br>Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քեյր Բիլդինգ Սերվիսիզ» ՍՊԸ-ի հետ:<br>- աշխատանքների իրականացում՝ 48,200,000 դրամ,<br>- ապրանքների ներկմուծում՝ 81, 800, 000 դրամ: | 130,000,000 դրամ |
| | | Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացում՝ 186,480,000 դրամ:<br>Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրականության համակարգերի, սարքերի և սարքավորումների ներմուծում՝-33,520,000 դրամ: | 220,000,000 դրամ |
| | | Շենքի ներքին հարդարման աշխատանքներ՝ 673,000,000 ՀՀ դրամ,<br>- ապրանքների ներմուծում՝ 67,000,000 ՀՀ դրամ: | 740,000,000 դրամ |
| | | Ապակյա փարթերների, ներքին ապակյա պատերի և աստիճանավանդակի ամրապատման աշխատանքներ, որի համար նախատեսվում է պայմանագիր կնքել «Պրոֆ-Ա» ՍՊԸ-ի հետ: | 60,000,000 դրամ |
| | | Ներքին և արտաքին լուսավորության սարքերի ու կախովի առաստաղների ներկրում | 210,000,000 դրամ |
| | | Դահլիճի, ցուցասրահի, հանդիպումների սենյակների և խոհանոցային կահավորանքի ներկում | 140,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետարան | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |



Կազմեց Լենա [illegible]
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
տեղակալ ֆինանսական գծով
Հեռ. 22-[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ-681-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/8816-14 և հուլիսի 8-ի N 06/3-3/8830-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի հունիսի 27-ի N 129 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի տնօրեն
Արեգ Մաղաքյանի կողմից

«16» հուլիսի 2014 թ.

**«Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Հայաստանի և Արցախի քաղաքային և գյուղական համայնքներում բնապահպանական իրավիճակի բարելավում, շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացում, դպրոցականների, ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, անտառատրնկման աշխատանքների իրականացում: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամ («Armenia tree project» Charitable Foundation (ATP)՝ Հայկական համազգումարի անդամ կազմակերպություն – ԱՄՆ, 65 Main Street, Watertown, MA 02472) |
| 4. | **Ծրագրի կատարողը** | «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Արշակունյաց 57/5, իրավաբանական հասցեն՝ Տպագրիչների 9, բն 55, ՀՎՀՀ՝ 02554563): |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և [illegible]** | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնապահպանության բնագավառ: |

| | | |
|---|---|---|
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 127,120,000 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբեր 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | • Հիմնադրամի Մարգահովտի և Կարինի կրթական կենտրոններում դպրոցականների ու ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, կրթական ծրագրի անհրաժեշտ ուսումնական նյութերի տպագրում, տեղեկատվական, բուկլետների և թռուցիկների, ցուցանակների պատրաստում - 31,050,000 դրամ (տարեկան 12,420,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը.<br><br>• Արագածոտնի մարզի Կարին, Արարատի մարզի Խաչփար և Լոռու մարզի Մարգահովիտ գյուղերում գործող՝ հիմնադրամին պատկանող տնկարաններում տնկանյութերի աճեցում - 36,800,000 դրամ (տարեկան 14,720,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը.<br><br>• Մարգահովիտ տնկարանի և համայնքների բնակիչների հողատարածքներում տնկիների աճեցում և դրանց լայնածավալ անտառատնկում -28,820,000 դրամ (տարեկան 11,528,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br><br>• ՀՀ և ԼՂՀ քաղաքային և գյուղական համայնքներում ծառատունկի իրականացում 17,030,000 դրամ (տարեկան 6,812,000 դրամ)<br>- 2013 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը, |



| | | |
|---|---|---|
| | | - 2014 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը,<br>- 2015 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | • տնկարանների համար գյուղատնտեսական գործիքների և սարքավորումների ձեռքբերում – 8,030,000 դրամ,<br>• շինանյութեր ձեռքբերում – 8,200,000 դրամ,<br>• բուժանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների ձեռքբերում – 3,750,000 դրամ,<br>• բամբակյա կտորի ձեռքբերում՝ մշտադալար արմատները փաթաթելու համար – 1,400,000 դրամ,<br>• ոռոգման ջրագծերի խողովակների և օժանդակ նյութերի ձեռքբերում – 2,340,000 դրամ,<br>• ցանկապատի ցցերի, փշալարի և օժանդակ նյութերի ձեռքբերում - 10,500,000 դրամ<br>• շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրի վերապատրաստման դասընթացների նյութերի ձեռքբերում – 10,200,000 դրամ,<br>• ուսումնական կենտրոնի համար գույքի և կահույքի ձեռքբերում - 4,800,000 դրամ,<br>• երկու կիսաբեռնատար տրանսպորտային միջոցների ձեռքբերում և ներմուծում - 29,480,000 դրամ,<br>• տրանսպորտային միջոցների պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման ծախսեր – 11,000,000 դրամ,<br>• վառելիքի ձեռքբերում - 19,000,000 դրամ,<br>• համակարգչային տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում - 5,000,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Ընդամենը՝ 13,420,000 դրամ (2.5 տարվա համար)<br>• ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացում - 2,400,000 դրամ,<br>• գրասենյակային նյութերի և պարագաների ձեռքբերում - 1,000,000 դրամ,<br>• կոմունալ ծախսեր (Երևանի գրասենյակ, Կարին, Խաչփառ գյուղերի տնկարաններ և Մարգահովիտ գյուղի ուսումնական կենտրոն) – 6,800,000 դրամ,<br>• հեռախոսակապի ծառայություն - 3,220,000 դրամ: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ) ՖԲՀ՝ կրթական ձեռնարկների մշակում:<br>ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և «Հայանտառ» ՊՈԱԿ՝ տնկիների, ցանկապատի նյութերի (փայտանյութ) ձեռքբերում, համատեղ անտառատնկման աշխատանքների իրականացում: |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Բարեգործի կողմից իրականացվող պարբերական մշտադիտարկման միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի
ֆինանսական ղեկավար

Ռուզաննա Առուստամյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 682 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն 2014 թվականի հունիսի 30-ի N 07/07.1/3389-14 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի 30-ի N 03/4504-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7900-14 և N 06/3-3/8196-14 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 1-ի N 01/15/2368-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 9,249,180 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԱՐԴԵՆԻՍ-5» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08800154) 2014 թվականի հունիսի 10-ին կնքված N WVA/VARD ADP/CW-14/002/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խմելու ջրի ջրագծի կառուցում՝ 9,249,180 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

17 հունիսի 2014թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքին խմելու ջրով ապահովելու հարցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>Հասցեն՝ 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռ.:՝ +01 49 49 11 12 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռ.:՝ +374 10 749119 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնք<br>Բնագավառը՝ ջրամատակարարում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9.249.180 (ինը միլիոն երկու հարյուր քառասունինը հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 հունիսի 2014թ. – 29 օգոստոսի 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2014թ. հունիսի 10-ից մինչև 2014թ. օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենինսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9.249.180 (ինը միլիոն երկու հարյուր քառասունինը հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքում կառուցվելու է համայնքին խմելու ջրով մատակարարող 3.000մ երկարությամբ ջրատարի 1.100մ երկարությամբ հատվածը: |



| | | |
|---|---|---|
| | | Աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը բաց մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «ՎԱՐԴԵՆԻՍՇԻՆ-5» ԲԲԸ-ի հետ: Աշխատանքներն սկսվել են 2014թ. հունիսի 10-ին և կավարտվեն մինչև 2014թ. օգոստոսի 29-ը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9.249.180 (ինը միլիոն երկու հարյուր քառասունինը հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Փոքր Մասրիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի և Վարդենիսի Տարածքային Զարգացման Ծրագրի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գեղարքունիքի մարզային զարգացման ղեկավար

Հուսիկ Սարգսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 683 -Ա**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՄՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 02/4795-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 03/07-1/7775-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9093-14 ու N 06/3-3/9135-14 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 8-ի N 02/4795-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,594,877 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամոյի համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեկուսիչ» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 04701782) 2014 թվականի մայիսի 30-ին կնքված N WVA/AMAS ADP/CW-HT-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի տեղադրման և արտաքին ջրագծի անցկացման աշխատանքների իրականացում՝ 5,594,877 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝

Ծիրայր Էդիլյան

02 հուլիսի 2014թ.

«ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի տեղադրում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ջեռուցման համակարգ տեղադրել ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցում: |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլորտման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ աջակցող գրասենյակ Հասցեն՝ 34834, Վեերհուզեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ. 1-888-511-6548 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնք Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5.594.877 (հինգ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 30 հունիսի 2014թ. – 31 օգոստոսի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. հունիսի 30-ից մինչև 2014թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ջեռուցման համակարգ տեղադրել ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5.594.877 (հինգ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում ջեռուցման համակարգ է տեղադրվելու ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցում: Աշխատանքները ներառում են ջեռուցման կաթսայի և ջեռուցման մարտկոցների տեղադրում, խողովակների մոնտաժում, ջեռուցման համակարգի միացում գազի և ջրի աղբյուրներին, արտաքին ջրագծի անցկացում, համակարգի փորձարկում: Ծրագրի իրականացման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «Մեկնուսիչ» ԱԿ-ի հետ: Աշխատանքները սկսվել են 2014թ. հունիսի 30-ին և կավարտվեն մինչև 2014թ. օգոստոսի 31-ը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5.594.877 (հինգ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի և միջնակարգ դպրոցի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Ամասիայի Տարածքային Զարգացման Ծրագրի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ աջակցող գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

/ Շաղիկ Մարուխյան K. Mayar

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2014 թվականի N Մ- 684 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/8815-14 և հուլիսի 10-ի N 06/3-2/9046-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված հսկողական տեսախցիկները (6 տեղ, 36.76 կգ ընդհանուր քաշով, 12,390 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 546 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-450-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 685 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9335-14 և N 06/3-2/9304-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տեսաձայնային համակարգի ապրանքները (190 կգ ընդհանուր քաշով, 5,382 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 218,400 դրամ, ՄԾՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 686 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N Մ-208-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՊԱՏՄՈՍ-ԱՐԱՐԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8486-14 և հուլիսի 2-ի N 07/80-2/8486-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-թյան 2014 թվականի հուլիսի 2-ի N ԱՄ/22.1/6677-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 17-ի «Պատմոս-Արարատ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ցերեկային վերականգնողական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-208-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «վերականգնողական սարքավորումների» բառերը փոխարինել «կահույքի, մարմնամարզական և վերականգնողական սարքավորումների ու գործիքների» բառերով:

2. Սահմանել, որ Ֆինլանդիայից՝ «Պատմոս» համաշխարհային առաքելությունների հիմնադրամի կողմից «Պատմոս-Արարատ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (մարմնամարզական և վերականգնողական սարքեր ու գործիքներ, ֆունկցիոնալ խանգարումների հետազոտման բժշկական սարք, ներկարարական գուաշ, դարակաշար, բազկաթոռ, 7 տեղ, 220.3 կգ ընդհանուր քաշով, 2,722.1 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,600 եվրո, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 687 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 7-ի N 07/80-2/8660-14 և N 06/3-3/8743-14 N եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի Կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2014 թվականի հունիսի 19-ին կնքված՝ N 17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 688 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/ 8826-14 և N 06/3-3/8777-14 N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2014 թվականի հունիսի 30-ին կնքված՝ N 1089202 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,251,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 689 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «Պ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/9417-14 և N 06/3-3/9388-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 02/4891-14 ու Հայաստանի Հանրապետության մշակույթի նախա-րարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 03/07-1/3277-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 16,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳԾՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2014 թվականի հունիսի 19-ին կնքված N ՀՀ/ՆՆ-07/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 15,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«08» հուլիսի 2014թ.

« Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական
դպրոցի հիմնանորոգման նախագծում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաշժտական միջնակարգ մասնագիտական դպրոցի սաների ուսումնառության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ ք. Երևան, մշակույթի բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 16.500.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաշժտական միջնակարգ մասնագիտական դպրոցը |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունիսի 19-ից մինչեւ 2014թ. հոյեմբերի19-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հունիսի 19-ից մինչեւ 2014թ. հոյեմբերի19-ը Պ.Չայկովսկու անվան երաշժտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման նախագծում 16.500.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից Պ.Չայկովսկու անվան երաշժտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման նախագծում՝15.500.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն 1.000.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 690 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱ-ՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԳԱԶԱՏԱՐԻՆ ՄԻԱՑՈՒՄ » ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/9443-14 և N 06/3-3/989-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 02/4993-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N ԱՄ/22.1/7283-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,091,608 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադա-րան»ՊՈԱԿ-ի շենքի արտաքին գազատարին միացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԱՅՍԱԹ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03313002) 2014 թվականի հուլիսի 7-ին կնքված N ԳԳ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազատարին միացման աշխատանքների իրականացում՝ 1,091,608 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

«09» հուլիսի 2014թ.

# « Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի շենքի արտաքին գազատարին միացում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել «Հանրապետական գիտաբժշկական գրադարանի այցելուների և աշխատակազմի աշխատանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործ | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, առողջապահության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.091.608,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հուլիսի 07 -ից մինչեւ 2014թ.սեպտեմբերի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հուլիսի 07 -ից մինչեւ 2014թ.սեպտեմբերի 07-ը միացնել «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի շենքի գազային համակարգը արտաքին գազատարին՝ արժեքը 1.091.608,00 դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԳԱՅՍԱԹ» ՍՊԸ-ի կողմից գազատարի միացման աշխատանքներ՝ 1.091.608,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Առողջապահության նախարարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 691 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/9416-14 և N 07/80-2/9387-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 02/4991-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N 07/15/3755-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի հուլիսի 10-ի N 01/10.1/2622-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 270,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջրտուք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2014 թվականի հուլիսի 2-ին կնքված N ՀՀ/ՆՆ-09/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն՝ 270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյան

«08» հուլիսի 2014.թ.

## «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն»

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բնակիչներին խմելու ջրով |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Համայնքայնություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղ, ջրամատակարարման բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 270.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հուլիսի 02 -ից մինչեւ 2014թ. հոկտեմբերի 02-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հուլիսի 02 -ից մինչեւ 2014թ. հոկտեմբերի 02-ը հետազոտական աշխատանքների կատարում 270.000,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ջրտուր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հետազոտական աշխատանքներ՝ 270.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հուլիսի 2014 թվականի N Մ - 692 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հուլիսի 18-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/9427-14 - և 14 հուլիսի 18-ի N 06/3-3/9721-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 02/4995-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հուլիսի 25-ի N 07/15/3966-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N 03/07-1/8230-14 ու Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2014 թվականի հուլիսի 15-ի N 01/05.1/3540-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 19,838,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի դպրոցների համակարգչային դասարանների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի հուլիսի 1-ին կնքված N ՀՀ-Կ-03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում՝ 19,838,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«09» հուլիսի 2014թ.

«Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի դպրոցների համակարգչային դասարանների կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի թվով հիսուն դպրոցների համակարգչային դասարանները անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 19.838.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ներկայացված պայմանագրի հավելված թիվ 2-ի ցանկում ներառված Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի թվով հիսուն դպրոցները |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հուլիսի 01-ից մինչեւ 2014թ. հոկտեմբերի 01-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հուլիսի 01-ից մինչեւ 2014թ. հոկտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածում կահավորել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի թվով հիսուն դպրոցների համակարգչային դասարանները 19.838.000,00 դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 2 հավելվածի դպրոցների և ապրանքատեսակների ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 19.838.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 693 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9349-14 և հուլիսի 16-ի N 06/3-2/9499-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N ԱՄ/22.1/7301-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Սանտա-Բարբարա քաղաքից «Դիրեքտ Ռելիֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (1 տեղ, 4,5 կգ ընդհանուր քաշով, 20,137.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 65100 դրամ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 հուլիսի 2014 թվականի N Մ- 694 -Ա**

**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հուլիսի 18-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-625-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/9847-14 և N 06/3-3/9884-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված բիտումի խմբաքանակները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագրի մասին» N Մ-625-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) 4 տեղ, 90,510 կգ ընդհանուր քաշով, 45,617.04 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 4,344.5 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

2) 4 տեղ, 94,320 կգ ընդհանուր քաշով, 52,066 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

3) 5 տեղ, 114,910 կգ ընդհանուր քաշով, 63,430 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 695 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9336 -14 և հուլիսի 15-ի N 06/3-2/9415-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N ԱՄ/22.1/7142-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ռենտգենյան ճառագայթումից պաշտպանիչ միջոցների (1 տեղ, 22.7 կգ ընդհանուր քաշով, 1,469 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 180 շվեյցարական ֆրանկ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 696 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9356-14 և հուլիսի 15 -ի N 06/3-2/9390-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տեսահամակարգի ապրանքների (42 կգ ընդհանուր քաշով, 1,095 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 180 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 697 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9653-14 և հուլիսի 26-ի N 06/3-2/9498-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 16-ի N ԱՄ/22.1/7327-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի 18-ի N ՖԲ/ԱնՄ-3/5696-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակեր-պության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում ներմուծվող ապրանքների ցանկին ավելացնել «պահեստամասեր Ֆորդ և Դոջ մակնիշի մարդատար ավտոմեքենաների համար» բառերը:

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) 2773 տեղ, 7,016 կգ ընդհանուր քաշով, 99,680.25 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

2) 20 տեղ, 18,521 կգ ընդհանուր քաշով, 91,610.04 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,533 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - UA-064G-1955
Բեռնագիր - NAM1878778
1 x 40' կոնտեյներ - TRLU7505199
Բեռնված 2014 թ. հունիսի 17-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շարլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Նիկոլ Դումանի 24ա
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 375028,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ 011-37410-26-07-56

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԿՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| ածկոցներ | 1 | 3.6 | 60.00 |
| նկողնային պարագաներ | 17 | 107 | 1,270.20 |
| րեխաների Ամանորյա տուփեր | 2344 | 2697.8 | 43,164.80 |
| խարկներ նոր | 11 | 29.7 | 1,305.00 |
| ագուստ և աքսեսուարներ | 251 | 2412.1 | 41,549.20 |
| ահածոյացված սննդամթերք | 2 | 32 | 85.25 |
| ենցաղային պարագաներ | 4 | 26.8 | 88.10 |
| ժշկական պարագաներ | 18 | 140.3 | 2,384.00 |
| ուղթ | 18 | 350.5 | 1,436.00 |
| արուձևի պարագաներ | 45 | 257 | 3,191.20 |
| ոշիկներ նոր | 1 | 5.8 | 124.80 |
| աղալիքներ նոր | 3 | 18.2 | 247.20 |
| ովի լողավազան | 2 | 16 | 70.00 |
| կղերի տակդիրներ | 15 | 280 | 150.00 |
| իթեղյա արկղեր | 2 | 160 | 100.00 |
| նարարական գործիքներ | 2 | 5.5 | 76.00 |
| ոշեկուլ | 1 | 12 | 119.00 |
| ոց | 1 | 10 | 169.00 |
| ահույք - ներքնակներ, 1 նորածնի մահճակալ | 7 | 158 | 935.00 |
| արդաբեռնատար մեքենայի պահեստամասեր (զտիչներ, ոչ, գործիքներ) | 13 | 40.5 | 929.50 |
| արդաբեռնատար մեքենայի յուղեր | 7 | 73.2 | 334.00 |
| արդաբեռնատար մեքենայի անվադողեր | 8 | 180 | 1,892.00 |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2773 | 7016 | 99,680.25 |

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2014թ. հունիս ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Արկղ | Բաշխվող քանակը կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ | Ծածկոցներ | 1 | 3.6 | 60.00 |
| | Անկողնային պարագաներ | 17 | 107 | 1,270.20 |
| | Երեխաների Ամանորյա տուփեր | 2344 | 2697.8 | 43,164.80 |
| | Գլխարկներ նոր | 11 | 29.7 | 1,305.00 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 251 | 2412.1 | 41,549.20 |
| | Պահածոյացված սննդամթերք | 2 | 32 | 85.25 |
| | Կենցաղային պարագաներ | 4 | 26.8 | 88.10 |
| | Կարուձևի պարագաներ | 45 | 257 | 3,191.20 |
| | Կոշիկներ նոր | 1 | 5.8 | 124.80 |
| | Խաղալիքներ նոր | 3 | 18.2 | 247.20 |
| | Փչովի լողավազան | 2 | 16 | 70.00 |
| | Արկղերի տակդիրներ | 15 | 280 | 150.00 |
| | Թիթեղյա արկղեր | 2 | 160 | 100.00 |
| | Կահույք - ներքնակներ, 1 նորածնի մահճակալ | 7 | 158 | 935.00 |
| ԱՄՆ ԱԳԱՊԵ ԿԲԿ ՀՀ մ/ճ Շինարարական գործիքները նախատեսված են անապահով ընտանիքների բնակելի տների վերանորոգման համար | Թուղթ | 18 | 350.5 | 1,436.00 |
| | Շինարարական գործիքներ | 2 | 5.5 | 76.00 |
| | Փոշեկուլ | 1 | 12 | 119.00 |
| | Սղոց շղթայով | 1 | 10 | 169.00 |
| ԱՄՆ ԱԳԱՊԵ ԿԲԿ ՀՀ մասնաճյուղի մարդասիրական ծրագրերի իրագործման համար էական նշանակություն ունեցող Ֆորդ և Դոջ մակնիշի մարդաբեռնատար ավտոմեքենաների համար | Մարդաբեռնատար մեքենայի պահեստամասեր (զտիչներ, մղիչ, գործիքներ) | 13 | 40.5 | 929.50 |
| | Մարդաբեռնատար մեքենայի շարժիչի և փոխանցման տուփի յուղ | 7 | 73.2 | 334.00 |
| | Մարդաբեռնատար մեքենաների տարասեզոնային անվադողեր | 8 | 180 | 1,892.00 |
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի բուժմիավորում | Բժշկական պարագաներ | 18 | 140.3 | 2,384.00 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

PROJECT AGAPE

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - VAJES 1113 7014
Բեռնագիր - NALE04396601
1 x 40' կոնտեյներ - ZCSU8797518
Կապարակնիք - UL-1756209
Բեռնված 2014 թ. հուլիսի 2-ին

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202-4316

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18, բնկ. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ 011-37410-22-52-29

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| 'որ բրնձա-սոյային ապուրներ | 18 | 17,839.70 | 74,416.32 |
| ժշկական պարագաներ | 2 | 681.3 | 17,193.72 |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 20 | 18521 | 91,610.04 |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2014թ. հուլիս ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | ՏԵՂ | Բաշխվող քանակը կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի, Քարեգահ գյուղի մանկապարտեզներ, Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 և թիվ 2 ՊՈԱԿ | Չոր բրնձա-սոյային ապուրներ | 18 | 17,839.70 | 74,416.32 |
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի բուժմիավորում | Բժշկական պարագաներ | 2 | 681.3 | 17,193.72 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 698 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N 06/3-2/9137-14 և հուլիսի 10-ի N 07/80-4/9090-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Դիդիզյանի սեփական միջոցներով որպես նվիրատվություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված մարմարե շատրվանի, լվացարանների, նստարանի և բրոնզե արձանի՝ (23 տեղ, 16,500 կգ ընդհանուր քաշով, 36,510 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 699 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8169-14 և N 06/3-7/8149-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից, անհատ բարերար՝ Հայկ Դիդիզյանի միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտե սալերի (56 տեղ, 102,600 կգ ընդհանուր քաշով, 55,910 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ և 14 տեղ, 25,500 կգ ընդհանուր քաշով, 13,978 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 700 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9089-14 և N 06/3-3/9044-1 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1,784,500 դրամ արժողությամբ «Հայոց եկեղեցու պատմության դասագրքերի ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2014 թվականի հունիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 5-րդ և 6-րդ դասարանների համար ուսումնական դասագրքերի տպագրություն՝ 1,7840.500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

Նախագահ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսականբաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«01» ____________ 2014 թ.

Հայոց Եկեղեցու պատմության դասագրքերի ձեռք բերում

8/1

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնի համար ձեռք բերել 5-րդ և 6-րդ դասարանների համար «Հայոց Եկեղեցու Պատմություն» առարկայի դասագրքեր, ինչպես նաև 5-6 դասարանների ուսուցչի ձեռնարկներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,784,500 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնը և աշակերտները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17 հունիս 2014թ. – 31 օգոստոս 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում ձեռք բերել 5-րդ և 6-րդ դասարանների համար «Հայոց Եկեղեցու Պատմություն» առարկայի դասագրքեր՝ յուրաքանչյուրը 1000 տպաքանակով, ինչպես նաև 5-6 դասարանների ուսուցչի ձեռնարկներ՝ 150 տպաքանակով՝ 1.784.500 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի կողմից (ՀՎՀՀ 02505322)՝ պայմանագիր կնքված 17.06.2014թ.:Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 17 հունիս 2014թ. – 31 օգոստոս 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել 5-րդ և 6-րդ դասարանների համար «Հայոց Եկեղեցու Պատմություն» առարկայի դասագրքեր, ինչպես նաև 5-6 դասարանների ուսուցչի ձեռնարկներ՝ 1,784,500 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Կրթության և Գիտության Նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 701 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9091-14 և հուլիսի 11-ի N 06/3-2/9142-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Արաբական Միացյալ Էմիրությունից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված գրանիտե սալիկների (11 տեղ, 10,864 կգ ընդհանուր քաշով, 20,641.6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրենկեան հանրակրթական դպրոցի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 702 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8170-14 N 06/3-7/8176-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հունգարիայից, անհատ բարերար՝ Է. Էօրնեկեանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդակարգավորիչի (մեկ տեղ, 2,090 կգ ընդհանուր քաշով, 32,4745 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 1745 եվրո (975,240 դրամ), ՄԾՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Է. Էօրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 703 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N 07/80-2/8339-14 և հուլիսի 1-ի N 06/3-7/8175-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից, անհատ բարերար՝ Հայկ Դիդիզյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտե սալիկների, պատուհանագոգերի, աստիճանասալերի, շրջանակների (51 տեղ, 110,660 կգ ընդհանուր քաշով, 44,815 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 20,400 ԱՄՆ-ի դոլար ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի շինարարության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 704 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-12/9098-14 և հուլիսի 11-ի N 06/3-3/9139-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրազդան Հյուրանոց» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596543) 2014 թվականի հունիսի 27-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների կազմակերպում՝ 40,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2014 թվականի N Մ- 705 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9094-14 և N 06/3-3/9047-14 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրազդան Հյուրանոց» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596543) 2014 թվականի հուլիսի 2-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների և ընթրիքի կազմակերպում՝ 240,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 706 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 2-ի N 07/80-2/8380-14 և հունիսի 26-ի N 06/3-3/7918-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՄՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2014 թվականի հունիսի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տրամադրել 40 հատ տաքատ, 40 հատ ժիլետ փրկարարի, 40 հատ շապիկ և 40 հատ ուսապարկ՝ 1,396,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 707 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 հունիսի 27-ի N 07/80-2/8047-14 և հուլիսի 1-ի N 06/3-3/8151-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի 19ա) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված N 012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում ալյումինե կոնստրուկցիաների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 233,333.33 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 708 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի14 -ի N 07/80-2/9240-14 և հուլիսի 16-ի N 06/3-3/9494-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի հուլիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի գնում՝ 1,317,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

«Պլանտ-Ա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011477) 2014 թվականի հուլիսի 7-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեղում մատակարարված ապրանքների և ծառայությունների մատուցում՝ 13,870,869.4 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 709 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/9426-14 և հուլիսի 16-ի N 06/3-3/9528-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՄՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2014 թվականի հուլիսի 8-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրկարարների համար հանդերձանքի ձեռքբերում՝ 4,672,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 710 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6819-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N 07/80-2/8565-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8918-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 /100 մգ/N 28-392 դեղահաբ, մեկ տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 784 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 57,28 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 711 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**

**(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6820-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 7-ի N 07/80-2/8658-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/9823-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-նաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ 35 տեղ, 325 կգ ընդհանուր քաշով, 8,397,79 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,782,08 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 712 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N2

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9101-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8937-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված արբանյակային հեռախոսներ, հեռախոսակապի ալեհավաքներ ու դրանց մալուխները (մեկ տեղ, 15 կգ ընդհանուր քաշով, 633 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 110 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն...

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 713 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 3

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9355-14 և հուլիսի 15-ի N 06/3-2/9383-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված դեղերը, բժշկական պարագաները և սարքերը (120 տեղ, 2,692 կգ ընդհանուր քաշով, 50,244.61 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9,277.40 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 714 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N1**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7872-14 և հուլիսի 8-ի N 06/3-3/8775-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 7-րդ ենթակետում «24,028,77 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «23,978,77 եվրոյին համարժեք դրամ» բառերով, իսկ «821793» թիվը փոխարինել «816793» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 17-րդ ենթակետում «10.000 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «15.000 եվրոյին համարժեք դրամ» բառերով, ինչպես նաև «2-րդ տարում՝ 2013 թվականին» բառերը փոխարինել «3-րդ տարում՝ 2014 թվականին» բառերով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մուրան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00084235) 2014 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ԳՀ- ԾՀԱՊՁԲ-11/21-2014/4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7,900,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 715 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 07/80-2/8553-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8908-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում.

1) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (858 տեղ, 15,300 կգ ընդհանուր քաշով, 29,335,45 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ ՏՄ).

2) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (46 տեղ, 16,854 կգ ընդհանուր քաշով, 25,915 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,400 եվրո, ՄԾՓ ՏՄ).

3) փայտե շինարարական վահանակներ (9 տեղ, 828 կգ ընդհանուր քաշով, 1,119,69 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,450 եվրո, ՄԾՓ ՏՄ).



4) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (մեկ տեղ, 20,045 կգ ընդհանուր քաշով, 25,004 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ ՏՄ).

5) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (110 տեղ, 20,470 կգ ընդհանուր քաշով, 25,658 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ ՏՄ).

6) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (109 տեղ, 14,122 կգ ընդհանուր քաշով, 52,898 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ ՏՄ).

7) փայտե շինարարական վահանակներ (73 տեղ, 18,386 կգ ընդհանուր քաշով, 18,741,47 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,739 եվրո, ՄԾՓ ՏՄ).

8) փայտե շինարարական վահանակներ, բրուսներ, կոնստրուկցիոն դետալներ (1,351 տեղ, 17,425 կգ ընդհանուր քաշով, 77,247,4 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ ՏՄ).

9) փայտե շինարարական վահանակներ (14 տեղ, 17,808 կգ ընդհանուր քաշով, 18,537,48 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,739 եվրո, ՄԾՓ ՏՄ).

10) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (465 տեղ, 7,163 կգ ընդհանուր քաշով, 120,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,950 եվրո, ՄԾՓ ՏՄ).

11) փայտյե տնակ (մեկ տեղ, 8,030 կգ ընդհանուր քաշով, 45,992,86 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,400 եվրո, ՄԾՓ ՏՄ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 716 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-438-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության 2014 թվականի հուլիսի 9-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվաանի հուլիսի 2-ի N ԱՄ/22.1/6674-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8156-14 և հունիսի 30-ի N 06/3-7/8115-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2008-2013 թվականների ընթացքում իրականացվող «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում նշված ծրագրի ժամկետը երկարաձգել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Հայ բժիշկներ» միության կողմից «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով Նիդերլանդներից ստացված բեռը (դեղորայք՝ «Sodium valproate 200 mg (blister) 100 tabs N 500» և «Carbamazepine 200mg (blister) 1000 tabs. N 60՝ 7 արկղ, 74 կգ ընդհանուր քաշով, 5, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով,փոխադրման ծախսերը կազմել են 650 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտու-թյուն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ-438-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1080-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-911-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 717 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N 07/80-2/8599-14 և հուլիսի 8-ի N 06/3-2/8851-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6812-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (արհեստական շնչառության համակարգի համար օդի կոմպրեսոր, 1 տեղ, 47 կգ ընդհանուր քաշով, 671,700 ճապոնական յենին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 718 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N 07/80-2/8598-14 և հուլիսի 9-ի N 06/3-2/8906-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6810-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (վիրահատական սեղանի լուսատուներ, 2 տեղ, 216 կգ ընդհանուր քաշով, 2,937,700 ճապոնական յենին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 719 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 7-ի N 07/80-2/8659-14 և հուլիսի 8-ի N 06/3-2/8854-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6811-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (արտադրական լվացքի մեքենա, արտադրական արդուկ, 2 տեղ, 1,300 կգ ընդհանուր քաշով, 13,202 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,264 եվրո, «ՄԾՓ» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 720 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի N 07/80-2/9354-14 և հուլիսի 15-ի N 06/3-2/9401-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 15-ի N ԱՄ/22.1/7226-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (դեղ և բժշկական պարագաներ, 2 տեղ, 81 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են խրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 721 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9100-14 և հուլիսի 14-ի N 06/3-2/9305-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 11-ի N ԱՄ/22.1/7108-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր պարագաների (1 տեղ, 28 կգ ընդհանուր քաշով, 2,948.40 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 341.60 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ- 722 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՊԲՀ-ՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/8817-14 և N 06/3-3/8796-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 02/4796-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 01/06.1/7952-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի 4-ի N ԱՄ/22.1/6808-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող՝ 213,671,716 դրամ ընդհանուր արժողությամբ «ԵՊԲՀ-ում գործնական հմտությունների սիմուլյացիոն ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագիրը (կցվում է):

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական
համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտորի կողմից
«30» հունիսի, 2014թ.
Մ.Զ. Նարիմանյան

«ԵՊԲՀ-ՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ» (ԳՀՍՈՒԿ)

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է խթանել ԵՊԲՀ-ի կրթական բարեփոխումները, նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում ուսանողների գործնական հմտությունների ուսուցանման նպատակով ԵՊԲՀ-ում ստեղծվում է սիմուլյացիոն ուսումնական կենտրոն: Գործնական հմտությունների դասավանդման արդյունավետության և որակի բարձրացման նորաստեղծ կենտոնը համալրվում է համապատասխան ուսումնական սարքավորումներով և հավաքածուներով՝ սիմուլյատորներով, ֆանտոմներով եւ վարժասարքերով, ինտերակտիվ էլեկտրոնային ձեռնարկներով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Նորարարությունների մրցակցային հիմնադրամ<br>Մ. Վրացյան 73, Երևան 0070, Հեռ՝ +374 (10) 57 56 90, Էլ. փոստ cfep@arminco.com |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական» ՊՈԱԿ (ԵՊԲՀ)<br>ՀՎՀՀ 01503448 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երեւան, Կորյուն 2, կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 213 671 716 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵՊԲՀ-ի ուսանողներ, կլինիկական օրդինատորներ եւ դասախոսներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հուլիսի 1-ից - 2014թ. նոյեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ. հուլիս – 2014թ. սեպտեմբեր: Սիմուլյացիոն ուսումնական հավաքածուների՝ վերակենդանացման ուսումնական հավաքածուի ձեռք բերում և ներմուծում: Այն իր մեջ ներառում է մանեկեններ/սիմուլյատորներ (1 հասուն մարդու եւ 1 կրծքի տարիքի երեխայի) և հիմնական սարքավորումների հավաքածուն, այդ թվում՝ ծրագրային փաթեներ, դասախոսի կայան, հիվանդի վիճակի վերաբերյալ սիմուլյացիոն կրթական մոնիթոր, ներգանգային ճնշման կրթական մոդուլ, և 14 ուսուցողական կանխամշակված կլինիկական սցենարով:<br>Ընդհանուր արժեքն է՝ 148 933 922 ՀՀ դրամ:<br><br>2014թ. հոկտեմբեր – 2014թ. նոյեմբեր: Սիմուլյացիոն կրթական հավաքածուների՝ <<կլինիկական հմտություններ>>, <<մանկաբարձություն և գինեկոլոգիա>>, <<վիրաբուժություն>> հավքածուների և այլ սիմուլյացիոն ուսցողական սարքավորումների ձեռք բերում և ներմուծում: <<Կլինիկական հմտություններ>> ուսումնական սիմուլյացիոն հավաքածուն ներառում է մարմնի տարբեր հատվածների կառուցվածքի, հիվանդությունների ախտորոշման, բուժական գործողությունների իրականացման 21 ենթահավաքածու: <<Մանկաբարձություն և գինեկոլոգիա>> ուսումնական սիմուլյացիոն հավաքածուն ներառում է մանկաբարձության և գինեկոլոգիայի տարբեր կլինիկական դեպքերով 8 ուսումնական սիմուլյացիոն ենթահավածաքու: |

| | | |
|---|---|---|
| | | <<Վիրաբուժություն>> ուսումնական սիմուլյացիոն հավաքածուն ներառում է 9 ուսումնական ենթահավաքածու, որոնք ներառում են մարդու մարմնի տարբեր հատվածներ եւ տարբեր օրգաններ, տարբեր տիպի վիրաբուժական կարեր դնելու ուսումնական հավաքածուներ: Թվարկված <<կլինիկական հմտություններ>>, <<մանկաբարձություն և գինեկոլոգիա>>, <<վիրաբուժություն>> հավքածուները կհամալրվեն նաեւ հավելյալ բաղադրիչներով:<br>Ընդհանուր արժեքն է՝ 64 737 794 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Սիմուլյացիոն ուսումնական հավաքածուների և սարքավորումների ձեռք բերում և ներմուծում: Ընդհանուր արժեքն է՝ 213 671 716 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | 1. Ընթացիկ այցեր և ծրագրի իրականացման ընթացքի գնահատում Նորարությունների մրցակցային հիմնադրամի փորձագետների, ՀՀ ԿԳՆ մասնագետների կողմից:<br>2. Հաշվետվությունների ներկայացում ՀՀ ԵՊԲՀ միջազգային համագործակցության և կրթական ծրագրերի բաժիններին ըստ ընդունված կարգի:<br>3. Ֆինանսական և ակադեմիական հաշվետվության ներկայացում ՀՀ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ին:<br>4. Ծրագրի ընթացքի եւ ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ [illegible]ության բարեգործական ծրագրերի [illegible] |

Ծրագրի համակարգող՝ Ա.Վ. [illegible]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 723 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N1)
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8160-14 և N 06/3-7/8195-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (4 տեղ, 48 կգ ընդհանուր քաշով, 7,739.95 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 696.98 ԱՄՆ-ի դոլար կազմել են փոխադրման և համանման այլ ծախսերը, «ՄՓ Եվ ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 724 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/8168-14 և N 06/3-7/8173-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (49 տեղ, 5,560 կգ ընդհանուր քաշով, 21,415 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 3,500 ԱՄՆ-ի դոլար կազմել են փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 725 - Ա**

**(քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N2)**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7868-14 և հուլիսի 1-ի N 06/3-7/8194-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (3 տեղ, 23,927 կգ ընդհանուր քաշով, 10,004.71 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 2,053.38 ԱՄՆ-ի դոլար կազմում է փոխադրման ծախսերը, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 726 - Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 20-ի N 3/3.8-2/7552-14 և մայիսի 19-ի N ՎՄ/3-4/6140-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ Լիգելյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2014 թվականի ապրիլի 10-ի N 020/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազրիքների պատրաստման և մատակարարման աշխատանքների կատարում՝ 10,750,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 հուլիսի 2014 թվականի N Մ - 727 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/8048-14 և հուլիսի 1-ի N 06/3-3/8231-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի Կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2014 թվականի հունիսի 19-ի N 038/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի մատակարարում՝ 30,093,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2014 թվականի N Մ- 728 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի հուլիսի 18-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կարեն Այդինյանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված FORD TRANSIT 22278G մակնիշի բեռնաուղևորային ավտոմեքենայի (նույնականացման համարը՝ XUS22278GE0001567, 1 տեղ, 2,303 կգ ընդհանուր քաշով, 1,525,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 30,000 ռուսական ռուբլի, ԱՄ ՄՁՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հուլիսի 2014 թվականի N Մ- 729 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը հիմք ընդունելով 2014 թվականի հուլիսի 22-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից «ՍՊԻԴ ինֆոսվյազ» ռուսական տարածաշրջանային հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «ՍՊԻԴ ինֆոսվյազ» ռուսական տարածաշրջանային հասարակական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև ստորագրված գույքի անհատույց, որպես դրամաշնորհի տրամադրման պայմանագրի շրջանակներում, ստացված շարժական բուժախտորոշիչ կլինիկա՝ KAMA3 65117 ավտոմեքենա՝ հենասարքով բազմասեկցիոն իզոթերմիկ բազայի վրա (մեկ տեղ, 14000 կգ ընդհանուր քաշով, 10,000,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԱՄՁԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ